ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈԼԵԳԻԱ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

11 հունվարի 2022 թվականի **թիվ 3** քաղ. Մոսկվա

Եվրասիական տրանսպորտային միջանցքներում եւ երթուղիներում ներառված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկելիս տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածների, սռնու բեռնվածությունների եւ եզրաչափերի մասին համաձայնագրի նախագծի մասին

1. Հավանություն տալ «Եվրասիական տրանսպորտային միջանցքներում եւ երթուղիներում ներառված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկելիս տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածների, սռնու բեռնվածությունների եւ եզրաչափերի մասին» համաձայնագրի նախագծին (կցվում է) եւ այն ուղարկել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ՝ ներպետական համաձայնեցում իրականացնելու համար:

2. Դիմել Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին՝ սույն կարգադրության 1-ին կետում նշված համաձայնագրի նախագծի

ներպետական համաձայնեցման գործընթացի արդյունքների մասին մինչեւ 2022 թվականի փետրվարի 28-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնելու խնդրանքով:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ընդունման օրվանից:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝ Մ. Մյասնիկովիչ

Նախագիծ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Եվրասիական տրանսպորտային միջանցքներում եւ երթուղիներում ներառված՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկելիս տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածների, սռնու բեռնվածությունների եւ եզրաչափերի մասին

Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունները, այսուհետ՝ անդամ պետություններ,

հիմնվելով «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի վրա,

ձգտելով արդյունավետորեն օգտագործել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) տարանցիկ ներուժը, բարձրացնել եվրասիական տրանսպորտային միջանցքներով եւ երթուղիներով միջազգային ավտոմոբիլային փոխադրումների արդյունավետությունը,

գիտակցելով անդամ պետությունների ավտոմոբիլային ճանապարհների ենթակառուցվածքի պահպանվածության եւ ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման կարեւորությունը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

1. Սույն համաձայնագրի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

ավտոբուս՝ վարորդի տեղից բացի 8-ից ավելի նստատեղ ունեցող՝ ուղեւորների եւ ուղեբեռի փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոց.

ավտոգնացք՝ համակցված տրանսպորտային միջոց, որը բաղկացած է բեռնատար ավտոմոբիլից եւ կցորդից (կցորդային ավտոգնացք), քարշակից եւ կիսակցորդից (թամբավոր ավտոգնացք).

բեռնատար ավտոմոբիլ՝ սեփական շարժիչով կահավորված եւ ավտոմոբիլային ճանապարհներով բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոց.

տրանսպորտային միջոցի թույլատրելի բարձրություն՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոցի բարձրություն, որը չի գերազանցում 1-ին հավելվածում նշված արժեքները.

տրանսպորտային միջոցի թույլատրելի երկարություն՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոցի երկարություն, որը չի գերազանցում 1-ին հավելվածում նշված արժեքները.

տրանսպորտային միջոցի թույլատրելի լայնություն՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոցի լայնություն, որը չի գերազանցում 1-ին հավելվածում նշված արժեքները.

տրանսպորտային միջոցի թույլատրելի զանգված՝ բեռով կամ առանց բեռի տրանսպորտային միջոցի զանգված, որը չի գերազանցում 2-րդ հավելվածում նշված արժեքները.

սռնու կամ սռնիների խմբի վրա ընկնող թույլատրելի զանգված՝ տրանսպորտային միջոցի սռնու կամ սռնիների խմբի միջոցով ավտոմոբիլային ճանապարհի մակերեւույթին փոխանցվող՝ բեռով կամ առանց բեռի զանգված, որի մեծությունը չի գերազանցում 3-րդ հավելվածում նշված արժեքները.

Եվրասիական տրանսպորտային միջանցք՝ երթուղիների ամբողջություն, որոնք ինտեգրված են այդ թվում անդամ պետությունների տարածքներով անցնող միջազգային տրանսպորտային միջանցքների ցանցում եւ միջազգային հաղորդակցության մեջ ապահովում են ուղեւորների ու բեռների փոխադրումը դրանց առավել մեծ կենտրոնացվածության ուղղություններով, ինչպես նաեւ այդ փոխադրումների իրականացման տեխնոլոգիական եւ կազմակերպաիրավական պայմանների ամբողջությունը.

անդամ պետության իրավասու մարմին՝ անդամ պետության գործադիր իշխանության մարմին, որի լիազորություններին են վերապահված սույն համաձայնագրի իրականացման հետ կապված հարցերը.

անբաժանելի բեռ՝ բեռ, որը չի կարող բաժանվել մասերի առանց սպառողական հատկությունները կորցնելու կամ առանց այն վնասելու ռիսկի: Խոշորաեզրաչափ տրանսպորտային միջոցով փոխադրման դեպքում անբաժանելի է համարվում այն բեռը, որն անբաժանելի է ըստ տրանսպորտային միջոցի թույլատրելի եզրաչափերը գերազանցող եզրաչափի (եզրաչափերի)՝ դրա վրա այդ բեռը բեռնելիս.

կիսակցորդ՝ բեռների փոխադրման համար հատուկ սարքավորված տրանսպորտային միջոց, որը նախատեսված է քարշակի հետ այնպես միացնելու համար, որ այդ տրանսպորտային միջոցի մի մասը գտնվի անմիջապես քարշակի վրա եւ դրան փոխանցի իր քաշի մի մասը.

կցորդ՝ քարշակի կամ բեռնատար ավտոմոբիլով քարշակման միջոցով բեռների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոց.

միակցված ավտոբուս՝ երկու կամ ավելի կոշտ հատվածամասերից բաղկացած, միմյանց հոդակապով միացված եւ յուրաքանչյուր հատվածամասում ուղեւորասրահ ունեցող ավտոբուս, որն ուղեւորներին թույլ է տալիս ազատորեն տեղաշարժվել մի սրահից մյուսը.

հատուկ թույլտվություն՝ անդամ պետության լիազորված մարմնի կողմից սահմանված կարգով տրված մեկանգամյա կամ բազմակի թույլտվություն՝ այն տրանսպորտային միջոցով եվրասիական տրանսպորտային միջանցքներով եւ երթուղիներով երթեւեկելու համար, որի բեռով կամ առանց բեռի քաշային եւ (կամ) եզրաչափային պարամետրերը գերազանցում են սույն համաձայնագրի 1-3-րդ հավելվածներում նշված արժեքները.

քարշակ՝ սեփական շարժիչով կահավորված եւ բացառապես կամ առավելապես կցորդի կամ կիսակցորդի քարշակման համար նախատեսված տրանսպորտային միջոց.

ծանրաքաշ եւ (կամ) խոշորաեզրաչափ տրանսպորտային միջոց՝ տրանսպորտային միջոց, որի՝ բեռով կամ առանց բեռի առավելագույն քաշային եւ (կամ) եզրաչափային պարամետրերը գերազանցում են սույն համաձայնագրի 1-3-րդ հավելվածում նշված արժեքները.

անդամ պետության լիազորված մարմին՝ հատուկ թույլտվություն տրամադրող անդամ պետության պետական իշխանության մարմին:

2. Սույն համաձայնագրում օգտագործվող մյուս հասկացությունները կիրառվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերով սահմանված իմաստներով:

Հոդված 2

Սույն համաձայնագրով սահմանվում են անդամ պետությունների՝ եվրասիական տրանսպորտային միջանցքներում եւ երթուղիներում ներառված ավտոմոբիլային ճանապարհներով (այսուհետ՝ ավտոմոբիլային ճանապարհներ) երթեւեկության դեպքում տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածները, սռնու բեռնվածությունները եւ եզրաչափերը:

Հոդված 5

1. Տրանսպորտային միջոցների՝ սույն համաձայնագրով սահմանվող թույլատրելի զանգվածները, սռնու բեռնվածությունները եւ եզրաչափերը պահպանվում են որպես տրանսպորտային միջոցների չափերին եւ զանգվածներին ներկայացվող առանձին պահանջներ՝ ելնելով ավտոմոբիլային ճանապարհներով դրանց անցման տեխնիկական հնարավորությունից:

Տրանսպորտային միջոցների՝ սույն համաձայնագրով սահմանված թույլատրելի զանգվածները, սռնու բեռնվածությունները եւ եզրաչափերը չեն վերաբերում տրանսպորտային միջոցների արտադրությանը:

2. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել համապատասխան անդամ պետության ավտոմոբիլային ճանապարհներով երթեւեկության դեպքում տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածների, սռնու բեռնվածությունների եւ եզրաչափերի այլ արժեքներ, որոնք չեն կարող ցածր լինել սույն համաձայնագրով սահմանված արժեքներից:

3. Անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան՝ ավտոմոբիլային ճանապարհներով ոչ խտրական հիմքով կարող է ժամանակավորապես սահմանափակվել կամ դադարեցվել տրանսպորտային միջոցների երթեւեկությունը: Այդ ավտոմոբիլային ճանապարհներով տրանսպորտային միջոցների երթեւեկության ժամանակավոր սահմանափակման կամ դադարեցման մասին որոշումներ ընդունելու դեպքում դրանց սեփականատերերը ձեռնարկում են ճանապարհային երթեւեկության կազմակերպման միջոցներ, այդ թվում՝ շրջանցիկ ճանապարհի կազմակերպման միջոցով, ինչպես նաեւ տեղեկացնում ավտոմոբիլային ճանապարհներից օգտվողներին՝ տրանսպորտային միջոցների երթեւեկության ժամանակավոր սահմանափակման կամ դադարեցման ժամկետների եւ շրջանցիկ ճանապարհից օգտվելու հնարավորության մասին:

Ավտոմոբիլային ճանապարհներին չի թույլատրվում նվազեցնել տրանսպորտային միջոցի թույլատրելի զանգվածի եւ սռնու կամ սռնիների խմբերի վրա ընկնող՝ սույն համաձայնագրի 2-րդ եւ 3-րդ հավելվածներում նշված թույլատրելի զանգվածի արժեքները՝ անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետեւանքով առաջացած՝ ավտոմոբիլային ճանապարհի կառուցվածքային տարրերի կրողունակության նվազեցման ժամանակահատվածում:

Հոդված 4

1. Ավտոմոբիլային ճանապարհներով փոխադրումներ կատարելիս անդամ պետությունները պետք է ջանքեր գործադրեն, որպեսզի տրանսպորտային միջոցների եզրաչափերը, զանգվածները եւ տրանսպորտային միջոցների սռնու կամ սռնիների խմբի վրա ընկնող զանգվածները չգերազանցեն սույն համաձայնագրով եւ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված արժեքները:

2. Տրանսպորտային միջոցի՝ թույլատրելի զանգվածները եւ սռնու բեռնվածությունները 2%-ից ավելի եւ (կամ) սույն համաձայնագրի 1-3-րդ հավելվածներում նշված եզրաչափային արժեքները գերազանցելու դեպքում ավտոմոբիլային ճանապարհներով այդ տրանսպորտային միջոցի երթեւեկության համար պահանջվում է անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված հատուկ թույլտվությունների առկայություն:

3. Անդամ պետությունների օրենսդրությամբ կարող են սահմանվել անբաժանելի չհանդիսացող բեռով ծանրաքաշ եւ (կամ) խոշորաեզրաչափ տրանսպորտային միջոցների երթեւեկության՝ սույն հոդվածի 2-րդ կետում նշված հատուկ թույլտվությունների տրամադրման սահմանափակումներ:

Հոդված 5

Անդամ պետությունները կձեռնարկեն միջոցներ, որպեսզի մինչեւ 2030 թվականի հունվարի 1-ը ավտոմոբիլային ճանապարհները, ավտոմոբիլային ճանապարհների հատվածներն ամբողջությամբ համապատասխանեն սույն համաձայնագրով սահմանված զանգվածի, սռնու բեռնվածության եւ եզրաչափերի թույլատրելի արժեքներ ունեցող տրանսպորտային միջոցների՝ դրանցով երթեւեկության համար նախատեսված պահանջներին:

Հոդված 6

Սույն համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով:

Հոդված 7

1. Անդամ պետությունները սահմանում են սույն համաձայնագրի իրականացման համար պատասխանատու լիազորված եւ իրավասու մարմիններ:

2. Անդամ պետությունները Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնում են սույն համաձայնագրի իրականացման համար պատասխանատու լիազորված եւ իրավասու մարմինների մասին՝ միաժամանակ ծանուցելով սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին: Լիազորված կամ իրավասու մարմնի անվանումը փոխվելու դեպքում համապատասխան անդամ պետությունն այդ մասին տեղեկացնում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովին:

Հոդված 8

Անդամ պետությունների իրավասու եւ (կամ) լիազորված մարմինների ներկայացուցիչները սույն համաձայնագրի իրականացման հարցերի վերաբերյալ կարող են անցկացնել աշխատանքային հանդիպումներ:

Հոդված 8

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում անդամ պետությունների կողմից՝ սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումն ավանդապահի կողմից դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

2. Անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով եւ սույն համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում:

3. Սույն համաձայնագիրը Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագիր է եւ Միության իրավունքի մասն է կազմում:

Կատարված է _____ քաղաքում, 20 ___ թվականի _____ «___»-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

Սույն համաձայնագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովում, որը, որպես սույն համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր անդամ պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հայաստանի Հանրապետության կողմից՝	**Բելառուսի Հանրապետության կողմից՝**	**Ղազախստանի Հանրապետության կողմից՝**	**Ղրղզստանի Հանրապետության կողմից՝**	**Ռուսաստանի Դաշնության կողմից՝**

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

Եվրասիական տրանսպորտային միջանցքներում
եւ երթուղիներում ներառված՝
Եվրասիական տնտեսական միության անդամ
պետությունների ավտոմոբիլային
ճանապարհներով երթեւեկելիս տրանսպորտային
միջոցների թույլատրելի զանգվածների,
սռնու բեռնվածությունների եւ
եզրաչափերի մասին համաձայնագրի

Տրանսպորտային միջոցների թույլատրելի եզրաչափերը

(մետր)

Տրանսպորտային միջոցի տիպը կամ տրանսպորտային միջոցների համակցությունները	Տրանսպորտային միջոցի թույլատրելի երկարությունը
Միակի տրանսպորտային միջոցներ	12
Կցորդներ	12
Ավտոգնացքներ	20
Երկսռնի ավտոբուսներ	13,5
Ավտոբուսներ՝ 2-ից ավելի սռնիով	15
Միակցված ավտոբուսներ	18,75
Տրանսպորտային միջոցի եզրաչափի հետեւի կետից դուրս ցցված բեռի երկարությունը չպետք է գերազանցի	2

Տրանսպորտային միջոցի տիպը կամ տրանսպորտային միջոցների համակցությունները	Տրանսպորտային միջոցի թույլատրելի լայնությունը
Բոլոր տրանսպորտային միջոցները	2,55
Տրանսպորտային միջոցների իզոթերմային թափքերը	2,6

Տրանսպորտային միջոցի տիպը կամ տրանսպորտային միջոցների համակցությունները	Տրանսպորտային միջոցի թույլատրելի բարձրությունը
Բոլոր տրանսպորտային միջոցները	4

Ծանոթագրություններ՝ 1. Տրանսպորտային միջոցների առավելագույն թույլատրելի եզրաչափերը ներառում են հանովի թափքերի եւ բեռների համար տարայի, այդ թվում՝ բեռնարկղերի չափսերը, եւ չեն ներառում ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, նորոգման եւ պահպանման ժամանակ օգտագործվող տրանսպորտային միջոցների կախովի սարքավորումների չափսերը:

2. Երկարությունը չափելիս հաշվի չեն առնվում տրանսպորտային միջոցի վրա մոնտաժված հետեւյալ սարքվածքները՝

հողմապակու մաքրման եւ ողողման սարքվածքները,

առջեւի ու հետեւի գրանցման համարանիշների ցուցատախտակները եւ պետհամարանիշների տեղադրման համար կոնստրուկցիոն տարրերը,

մաքսային կապարակնիքը եւ դրա պաշտպանության տարրերը,

վրանածածկի ամրացման սարքվածքները եւ դրա պաշտպանության տարրերը,

լուսավորման եւ լուսային ազդանշանման սարքվածքները,

արտաքին հայելիները եւ ոչ ուղիղ տեսանելիության այլ սարքվածքներ,

դիտման օժանդակ միջոցները,

դեպի ներքին այրման շարժիչի ներթող համակարգ օդառքի սարքվածքները,

ապամոնտաժվող թափքերի համար սեւեռապնդման սարքվածքները,

ոտնատեղերը եւ բռնածողերը,

էլաստիկ բուֆերային սարքվածքները կամ համանման սարքավորումները,

շարժման դիրքում վերհան հարթակները, թեքահարթակները եւ համանման սարքավորումները, որոնք եզրաչափերը չեն ավելացնում 300 մմ-ից ավելի՝ պայմանով, որ տրանսպորտային միջոցի բեռնունակությունը չի մեծանում.

տրանսպորտային միջոցների կցման եւ քարշակման սարքվածքները.

արտաթող համակարգի խողովակները.

հանովի սփոյլերները.

տրանսպորտային միջոցների հոսանընդունիչները՝ հպումային ցանցից էլեկտրասնմամբ.

արտաքին արեւապաշտպան հովարները:

3. Լայնությունը չափելիս հաշվի չեն առնվում տրանսպորտային միջոցի վրա մոնտաժված հետեւյալ սարքվածքները՝

մաքսային կապարակնիքը եւ դրա պաշտպանության տարրերը,

վրանածածկի ամրացման սարքվածքները եւ դրա պաշտպանության տարրերը,

դողերում ճնշումը հսկելու սարքվածքները,

անիվների տակից ցրցայտման պաշտպանիչ համակարգի ցցված ճկուն մասերը,

M3 կատեգորիայի տրանսպորտային միջոցների՝ շարժման դիրքում մուտքի թեքահարթակները, շարժման դիրքում վերհան հարթակները եւ համանման սարքավորումները՝ պայմանով, որ այդ սարքվածքները տրանսպորտային միջոցի կողային մակերեւույթից, 10 մմ-ից ավելի չեն ցցվում, եւ թեքահարթակների՝ դեպի առաջ ու հետ ուղղված անկյունային եզրերն ունեն 5 մմ-ից ոչ պակաս կլորացման շառավիղներ,

ընդ որում, մնացած եզրերի կլորացման շառավիղները պետք է լինեն 2,5 մմ-ից ոչ պակաս,

արտաքին հայելիները եւ ոչ ուղիղ տեսանելիության այլ սարքվածքներ,

դիտման օժանդակ միջոցները,

հավաքվող ոտնատեղերը,

լուսավորման եւ լուսային ազդանշանման սարքվածքները,

դողերի կողային պատերի ձեւախախտվող մասը՝ անմիջապես մակերեւույթի հետ հպման կետի վերեւում:

4. Բարձրությունը չափելիս հաշվի չեն առնվում տրանսպորտային միջոցի վրա մոնտաժված հետեւյալ սարքվածքները՝

ալեհավաքները,

հոսանահանները կամ հոսանընդունիչները՝ բարձրացված դիրքում:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

Եվրասիական տրանսպորտային միջանցքներում
եւ երթուղիներում ներառված՝
Եվրասիական տնտեսական միության անդամ
պետությունների ավտոմոբիլային
ճանապարհներով երթեւեկելիս տրանսպորտային
միջոցների թույլատրելի զանգվածների,
սռնու բեռնվածությունների եւ
եզրաչափերի մասին համաձայնագրի

Տրանսպորտային միջոցների թույլատրելի զանգվածները

(տոննա)

Տրանսպորտային միջոցի տիպը կամ տրանսպորտային միջոցների համակցությունները, սռնիների քանակը եւ դիրքը	Թույլատրելի զանգվածը
Միակի ավտոմեքենաներ	
երկսռնի	18
եռասռնի	25
քառասռնի	32
5 եւ ավելի սռնի ունեցող	38
Միակի ավտոբուսներ	
երկսռնի	18
եռասռնի	25
քառասռնի	32
Միակցված ավտոբուսներ	
եռասռնի	28
քառասռնի	36
5 եւ ավելի սռնի ունեցող	40
Ավտոգնացքներ	
եռասռնի	28
քառասռնի	36

Տրանսպորտային միջոցի տիպը կամ տրանսպորտային միջոցների համակցությունները, սռնիների քանակը եւ դիրքը	Թույլատրելի զանգվածը
5 սռնի ունեցող	40
6 եւ ավելի սռնի ունեցող	44

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 3

Եվրասիական տրանսպորտային միջանցքներում
եւ երթուղիներում ներառված՝
Եվրասիական տնտեսական միության անդամ
պետությունների ավտոմոբիլային
ճանապարհներով երթեւեկելիս տրանսպորտային
միջոցների թույլատրելի զանգվածների,
սռնու բեռնվածությունների եւ
եզրաչափերի մասին համաձայնագրի

Սռնու կամ սռնիների խմբի վրա ընկնող թույլատրելի զանգվածները

(տոննա)

Տրանսպորտային միջոցի սռնիների դիրքը*	Մոտեցված սռնիների միջեւ հեռավորությունը, մ	Անվավոր տրանսպորտային միջոցի սռնու** թույլատրելի բեռնվածությունը
Միակի սռնի	2,5-ից ավելի	10,5(11,5)
Մոտեցված կրկնակի սռնիների խումբ	մինչեւ 1-ը (ներառյալ)	11,5(12,5)
	1-ից ավելի՝ մինչեւ 1,3-ը (ներառյալ)	14(16)
	1,3-ից ավելի՝ մինչեւ 1,8-ը (ներառյալ)	17(18)
	1,8-ից ավելի՝ մինչեւ 2,5-ը (ներառյալ)	18(20)
Մոտեցված եռակի սռնիների խումբ	մինչեւ 1-ը (ներառյալ)	17(18)
	1-ից ավելի՝ մինչեւ 1,3-ը (ներառյալ)	20 (21)
	1,3-ից ավելի՝ մինչեւ 1,8-ը (ներառյալ)	23,5 (24)
	1,8-ից ավելի՝ մինչեւ 2,5-ը (ներառյալ)	25 (26)
3-ից ավելի սռնիով մոտեցված սռնիների խումբ (սռնու վրա 2-ից ոչ ավելի միադող կամ երկդող անիվներ)	մինչեւ 1-ը (ներառյալ)	5,5 (6)
	1-ից ավելի՝ մինչեւ 1,3-ը (ներառյալ)	6,5 (7)

* Միակի սռնի՝ տրանսպորտային միջոցի՝ մյուս ամենամոտ սռնուց 2,5 մետրից ավելի հեռավորության վրա տեղադրված սռնի:
Մոտեցված սռնիների խումբ՝ սայլակի մեջ կառուցվածքապես միավորված եւ (կամ) չմիավորված, ամենամոտ սռնիների միջեւ մինչեւ 2,5 մետր (ներառյալ) հեռավորությամբ խմբավորված սռնիներ:
** Մոտեցված կրկնակի եւ եռակի սռնիների խմբերի համար՝ սռնիների խմբի վրա ընկնող թույլատրելի զանգվածը:

Տրանսպորտային միջոցի սռնիների դիրքը*	Մոտեցված սռնիների միջեւ հեռավորությունը, մ	Անվավոր տրանսպորտային միջոցի սռնու** թույլատրելի բեռնվածությունը
	1,3-ից ավելի՝ մինչեւ 1,8-ը (ներառյալ)	7,5 (8)
	1,8-ից ավելի՝ մինչեւ 2,5-ը (ներառյալ)	8,5 (9)
2 եւ ավելի սռնիով մոտեցված սռնիների խումբ (սռնու վրա 4 (ներառյալ) եւ ավելի միադող կամ երկդող անիվներ)	մինչեւ 1-ը (ներառյալ)	11
	1-ից ավելի՝ մինչեւ 1,3-ը (ներառյալ)	12
	1,3-ից ավելի՝ մինչեւ 1,8-ը (ներառյալ)	14
	1,8-ից ավելի՝ մինչեւ 2,5-ը (ներառյալ)	16

Ծանոթագրություններ. 1. Առանց փակագծերի բերված են միադող անիվներով սռնիների համար արժեքները (տրանսպորտային միջոցի՝ մեկ դող ունեցող անիվ), փակագծերում՝ երկդող անիվներով սռնիների համար արժեքները (տրանսպորտային միջոցի՝ երկու դող ունեցող անիվ):

2. Իրենց կազմում միադող եւ երկդող անիվներ ունեցող՝ մոտեցված սռնիների խմբերը հարկավոր է դիտարկել որպես իրենց կազմում միադող անիվներ ունեցող՝ մոտեցված սռնիների խմբեր:

3. Մոտեցված կրկնակի եւ եռակի սռնիների խմբերի համար սռնու թույլատրելի բեռնվածությունը որոշվում է սռնիների խմբի թույլատրելի բեռնվածությունը խմբում սռնիների համապատասխան քանակի վրա բաժանելու միջոցով՝ բացառությամբ սույն ծանոթագրությունների 4-րդ կետում նշված դեպքերի:

4. Թույլատրվում է մոտեցված կրկնակի եւ եռակի սռնիների խմբերի համար սռնիների բեռնվածության անհամաչափ բաշխում, եթե սռնիների խմբի բեռնվածությունը չի գերազանցում սռնիների համապատասխան խմբի թույլատրելի բեռնվածությունը եւ սռնիների խմբում յուրաքանչյուր սռնու բեռնվածությունը չի գերազանցում միադող կամ երկդող անիվներով համապատասխան միակի սռնու թույլատրելի բեռնվածությունը:

5. Սռնիների խմբերում սռնիների միջեւ հեռավորությունների տարբեր արժեքների դեպքում սռնիների միջեւ յուրաքանչյուր հեռավորությանը տրվում է թվաբանական միջինացման եղանակով ստացված արժեք (խմբում սռնիների միջեւ բոլոր հեռավորությունների գումարները բաժանվում են խմբում սռնիների միջեւ հեռավորությունների քանակի վրա):